ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման-Հետադարձ կապի ազդեցությունը սովորողի առաջադիմության վրա

Մասնակից՝Ենոքյան Կարինե

Դպրոց՝ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂԱՌԱՏԱՇԵՆ .
ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ

Վերապատրաստող՝Ղուկասյան Լուսինե

Վաղարշապատ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
Գրականության ակնարկ	4
Գործնական համատեքստ	8
Հետազոտության ընթացք	11
Տվյալների մշակում և վերլուծություն	16
Եզրակացություն	17
Գրականություն	18

Ներածություն

Տիեզերքում կյանքը գոյություն
ունի միայն այն պատճառով,
որ ածխածնի ատոմն ունի
որոշ անսովոր հատկություններ:
Մ.Վ. Լոմոնոսով

Բազմաթիվ ուսումնասիրությունները հաստատում են, որ **հետադարձ կապի** տրամադրումը՝ ուսուցման գործընթացի արդյունավետության վրա ազդող առավել կարևոր գործոններից մեկն է:

Սակայն, շատ դպրոցներ խնդրին դիմակայելիս ոչ ռացիոնալ են օգտագործում **հետադարձ կապի** միջոցով ստացված տվյալները և տեղեկատվությունը, ինչը հանգեցնում է **հետադարձ կապ** տրամադրելու նպատակի և ըստ էության անհրաժեշտության գիտակցման բացակայության:

Սակայն գրագետ օգտագործման դեպքում **հետադարձ կապը** կարող է նպաստել աշակերտի անհատական զարգացմանը, ստեղծել ավելի հարմարավետ ուսուցման միջավայր, վերացնել աշակերտների և ուսուցչի միջև թյուր ըմբռնումները: Այս գործընթացը որակյալ ուսուցման կարևորագույն բաղադրիչն է, որը հատկապես կարևոր է համաճարակից հետո կրթության վերականգնմաժամանակահատվածում:

Ժամանակին, ճիշտ ձևով տրամադրված հետադարձ կապը կօգնի դպրոցներին հասկանալ որակյալ կրթության ապահովման մեխանիզմները, ինչով էլ պայմանավորված է հետազոտության մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը:

Ավանդական կրթական համակարգը ենթադրում է ուսումնական, արտաքին, ակադեմիական ազդեցությունների և փոխազդեցության միջոցով աշխատող ուսուցիչ:

Մասնագիտական պատրաստման, աճի եղանակներն ու ձևերը,

մեթոդներն ու ռազմավարությունները ենթադրում են ուսուցչի վրա արտաքին ազդեցություն, որը միշտ չէ, որ ուսուցիչն իր անձային զարգացման համար կարևոր է համարում: **Ինքնակատարելագործման համակարգը** ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություն կամ անձնական աշխատանքային փորձ է ենթադրում, այլև ճանաչողական գործունեություն: Մեր կարծիքով, հանրակրթական դպրոցում վերլուծելով պրակտիկայի արդյունքները, դասեր, տարբեր իրադրություններ, եկել ենք եզրակացության, որ **ռեֆլեքսիան** ուսուցիչների ամենաթույլ կողմերից է: Փաստ է, որ դեռևս ՀՀ ոչ մի մանկավարժական ուղղվածության բուհում չեն գործում ապագա ուսուցչի ռեֆլեքսիվ ունակությունները զարգացնելու ծրագրեր: Կարծես թե չկա **մանկավարժական ռեֆլեքսիան** ձևավորելու նպատակաուղղված և պլանավորված համակարգ, այն զարգացնելու ռազմավարություն:

Գրականության ակնարկ

Հետադարձ կապը սովորողի ուսման և դրա հաջողության վրա ունի հզոր ազդեցություն: Այդ ազդեցությունը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Դրա ուժի մասին հաճախ է նշվում ուսումնառության և ուսուցման վերաբերյալ մասնագիտամեթոդական աղբյուրներում, բայց հետազոտություններից մի քանիսն են միայն համակարգված կերպով ուսումնասիրել այն:

Մեր հետազոտության շրջանակներում փորձենք իրականացնել հետադարձ կապի հաստատման եղանակների վերլուծություն և ուսման, սովորողի ուսումնական ձեռքբերումների, առաջադիմության վրա ունեցած ազդեցության դիտարկում: Հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է:

Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և սովորողների անդրադարձի: Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սովորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, ոգեշնչվելով շարժվել առաջ, բացահայտել սեփական բացթողումները և բարելավել ուսումնառության արդյունքը: Որպես գիտական հասկացություն **ռեֆլեքսիան կամ անդրադարձը** ձևավորվել է փիլիսոփայության շրջանակներում և սահմանվում է որպես անհատի կողմից իր գիտակցության մեջ կատարվածի մասին դատողություն (Лекторский В.А. Диалектика рефлективного и нерефлективного в познании / В.А.Лекторский // Проблемы рефлексии в научном познании: / Отв. ред. В. Н. Борисов. Куйбышев: Изд-во КГУ, 1983. - С. 5 - 7.):

Ռ.Դեկարտը նույնացնում է **ռեֆլեքսիան** արտաքին աշխարհի, մարմնականից վերացարկելու և անհատի սեփական մտքերի վրա կենտրոնանալու ունակության հետ:

Արիստոտելը վերագրում է **ռեֆլեքսիային** նոր գործառույթներ:

Ըստ նրա՝ **ռեֆլեքսիան** իրականությունը փոխելու մեխանիզմ է: Արիստոտելը չի սահմանում **«ռեֆլեքսիա»** հասկացությունը, սակայն դիտարկում է այն որպես աստվածային բանականությանը բնորոշ ունակություն:
Առաջին անգամ **«ռեֆլեքսիա»** եզրույթը շրջանառության մեջ է դնում **Դ.Լոքը**: Ըստ նրա՝ **«փորձի առաջին աղբյուրը զգացողությունն է, երկրորդը՝ ռեֆլեքսիան է, քանի որ այն այնպիսի գաղափարներ է առաջ բերում, որոնք ձեռք են բերվում հոգու մասին ռեֆլեքսիայի միջոցով»:**
Մտածողը որևէ երևույթ դիտելու ընթացքում միաժամանակ հետևում է արտաքին աշխարհին և իր գործունեությանը:
Ապագա ուսուցիչը պետք է կարողանա տարբերակել **անձնային ռեֆլեքսիան մասնագիտական ռեֆլեքսիայից**, զարգացնել ռեֆլեքսիան ռեֆլեքսիայի մասին, տարբերակել ռեֆլեքսիայի փուլերը (սևեռվել սեփական անձի վրա, վերլուծել և գնահատել սեփական ռեֆլեքսիան):
Բ.Զ. Վուլֆովը գտնում է, որ **մանկավարժական ռեֆլեքսիան** մասնագիտական ռեֆլեքսիան է: Ըստ այդմ, նա մասնագիտական ռեֆլեքսիայի ձևավորման երեք փուլ է առանձնացնում՝ «նախամասնագիական, մասնագիտական և հետմասնագիտական» (Вульфов Б.З. Профессиональная рефлексия: потребность, сущность, управление // Магистр. 1995. - №1. - С. 71-79):
Ըստ նրա, մանկավարժն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է տեղեկատվության հետևյալ տեսակներով**. «ներքին տեղեկատվություն, որ հանդես է գալիս կուտակված գիտելիքների ձևով, ընկալման արդյունքում ստացված տեղեկություններ, հետադարձ կապի, շփման, սովորողների հետ փոխհարաբերության (ազատ տեղեկատվություն), ռեֆլեքսիվ տեղեկատվություն, որը ձեռք է բերվել տրամաբանական մտածողությամբ, ինչպես նաև ներըմբռնողությամբ և երևակայությամբ»** (Вульфов Б.З. Профессиональная рефлексия: потребность, сущность, управление // Магистр. 1995. - №1. - С. 71-79):
Ռեֆլեքսիայի կարևոր գործառույթ է հետադարձ կապի ապահովումը, որը ենթադրում է նաև վերահսկողության իրականացում դաստիարակության

տարբեր փուլերում:

Ա.Պ.Գուրեևը զարգացրեց ռեֆլեքսիայի կամ անդրադարձի շարքը, ըստ որի՝ **«ուսուցիչն անդրադարձ է անում իր գործընկերոջ մտավոր գործունեության համապատասխան մոդելների»** (Гуреев А.П., Рефлексия профессиональной деятельности педагога как психолого-педагогическая проблема: Челябинск, 2001.- 155 с.):

Առարկայական, գիտական մակարդակում **ռեֆլեքսիան** ենթադրում է մասնագիտական կամ կոնկրետ մանկավարժական գործունեության, գործընթացի անդրադարձ:

Անձնային ոլորտում, ուսուցիչը փորձում է բացահայտել իր իսկ հոգեբանական առանձնահատկությունները: Ընդ որում՝ անձնային հոգեբանական մակարդակում **ռեֆլեքսիան** ենթադրում է ավելի բարդ մտածական գործընթացներ:

Կարելի է առանձնացնել ուսուցչի **մասնագիտական ռեֆլեքսիային** (А.П.Гуреева, И.А.Мушкина) դպրոցականի ռեֆլեքսիայի ձևավորման տեխնոլոգիաներին (Т.В.Белозерцева, Н.Б.Крашенинникова), ուսուցչի պատրաստման գործընթացում ռեֆլեքսիայի գործառույթների բացահայտմանը (О.Ю.Шаврина) նվիրված աշխատանքները:

Ռեֆլեքսիվ կոմպետենտությունը հոգեբանամանկավարժական բարդ և մասնագիտական առումով կարևոր երևույթ է, որը բաղկացած է ճանաչողական, գործառնական և անձնային բաղադրիչներից:

Ընդհանուր առմամբ, մանկավարժի **ռեֆլեքսիվ կոմպետենտությունը** ենթադրում է որոշակի գիտելիքներ **ռեֆլեքսիայի** մասին, ինչպես նաև կիրառելու ունակություններ: Այդ համատեքստում կարևոր է նաև ուսուցչի վերաբերմունքը ռեֆլեքսիայի նկատմամբ:

Ռեֆլեքսիվ կոմպետենտությունը հնարավոր է շարունակաբար զարգացնել, եթե ուսուցիչը կամ աշակերտը ներգրավվում են հետազոտական գործունեության, հետազոտական աշխատանքի մեջ: Այս համատեքստում անհրաժեշտ է հստակորեն տարանջատել հետազոտական պրակտիկան մանկավարժական պրակտիկայից: Վերջինն ավելի լայն հասկացություն է: Ակնհայտ է, որ ուսուցչի **ռեֆլեքսիվ** կոմպետենտությունը ձևավորվում է

դեռևս բուհում:
Ուսուցչի պատրաստման բոլոր փուլերում, հատկապես մանկավարժական գործունեության ընթացքում ուսուցիչը պետք է կարողանա իրականացնել ինքնավերլուծություն, ընկղմվել յուրահատուկ ինքնաճանաչողական գործընթացի մեջ, հասկանալ ինքն իրեն և դիմացինին:
Ռեֆլեքսիան անհրաժեշտ է մանկավարժական գործունեությունն իրականացնելու, սովորողներին գնահատելու համար:
Արդի փուլում հնարավոր չէ պատկերացնել ուսուցչի մանկավարժական գործունեության կազմակերպումն առանց **ռեֆլեքսիվ** գրառումների ներդրման: Ուսուցիչը պետք է կարողանա վերլուծել դասը, իրականացնել խորհրդատվություն, բացահայտել գործընթացի առանձնահատկությունը, ներկայացնել մանկավարժական և արտամանկավարաժական պայմանները, ինչպես նաև ուսուցչի ռեֆլեքսիայի վրա ազդող հիմնական գործոնները:
Ռեֆլեքսիայի կարևոր գործառույթ է աշակերտական կոլեկտիվում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծումը, կառուցողական մեթոդներով կրթական գործընթացի կազմակերպումը:
Ռեֆլեքսիան իբրև սուբյեկտի ինքնաճանաչողության ներքին հոգեկան ակտերի և իրավիճակների գործընթաց, ենթադրում է սեփական հոգեկան գործունեության վրա հատուկ ուղղվածության ուշադրություն, որն էլ իր հերթին պահանջում է սուբյեկտի բավականին բարձր հասունություն:
Ռեֆլեքսիան փոխհասկացության մեխանիզմ է ենթադրում, երբ անձը գիտակցում է, թե ինչ միջոցներով և ինչու է տպավորություն թողնում գործընկերոջ վրա: **Ռեֆլեքսիան** օգնում է անձին հասկանալ ոչ միայն այն, թե ինչպես է տպավորություն թողնում, այլ նաև, թե իր վրա ինչպես են ազդում շրջապատի մարդիկ:
Ռեֆլեքսիան հանդես է գալիս որպես բազմաբովանդակ երևույթ, որը մեկնաբանվում է ինչպես անհրաժեշտ պայման, մեխանիզմ, ինքնազարգացման հիմք և միջոց: Այն ներկայացնում է ուսուցչի, ընդհանրապես մանկավարժի ճանաչողական, հաղորդակցական, կազմակերպչական, նախագծային կարողությունները:
Ռեֆլեքսիայի միջոցով հնարավոր է լուծել ռազմավարական, տակտիկական,

գործառնական խնդիրներ: Ուսուցման գործընթացում կարևոր է **ռեֆլեքսիայի կոնֆլիկտահարթիչ** գործառույթը:

Մանկավարժական ռեֆլեքսիան օգնում է ճիշտ գնահատել կրթության սուբյեկտների սոցիալական դերերը և հաղթահարել անձնային կարծրատիպերը (Мушкина И. А. Педагогическая рефлексия как основа совершенствования профессионального мастерства учителя: М., 1999. - 152 с.):

Ռեֆլեքսիան անձի ինքնաիրացման կարևոր գործիք է: Այն անձի կարևոր ինտեգրատիվ որակ է:

Մանկավարժական ռեֆլեքսիան հնարավոր է անվերջորեն զարգացնել, հատկապես երբ անձը ներգրավված է նորարարական գործունեության մեջ: Ըստ **Ա.Պ.Գուրեևի՝ ռեֆլեքսիայի** զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել յուրահատուկ նորարարական միջավայր (Гуреев А.П., Рефлексия профессиональной деятельности педагога как психологопедагогическая проблема: Челябинск, 2001.- 155 с.):

Մասնագիտական գործունեության փորձի, հաղորդակցական, մասնագիտական, մանկավարժական վարքագծի **ռեֆլեքսիվ** վերլուծությունն ուսուցչի մասնագիտական կայացման անբաժանելի մասն է կազմում:

Մասնագիտական ինքնակատարելագործման գործընթացում նկատվում է **ռեֆլեքսիվ** ուղեկցման դեֆիցիտ կամ պակաս: Խնդիր է դրվում ուսուցիչների շրջանում տարերային կամ ներըմբռնողական ձևավորվող ռեֆլեքսիան դարձնել կազմակերպված, ուղղորդվող գործընթաց:

Գործնական համատեքստ

Տարիների իմ փորձը և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ հետադարձ կապը հիմնականում բացասական է, այն կարող է խոչընդոտել սովորողների առաջադիմությանը և ջանքերին:
Սակայն այլ դեպքերում պետք է ավելի խորն ուսումնասիրել, որպեսզի գտնենք համապատասխան հետադարձ կապ, որը չի խոչընդոտում սովորողի ուսուցմանը:
Իմ կարծիքով, հենց դրանով են լավ ուսուցիչները, ում աշակերտներն ամբողջ կյանքում դրականորեն են հիշում, տարբերվում մյուս ուսուցիչներից:
Ուսուցիչը հատուկ պատասխանատվություն է կրում աշակերտի ուսուցմանը նպաստելու և հետադարձ կապը նրա հետ ապահովելու համար, որ հանկարծ սովորողը դասարանից դուրս չգա պարտության զգացումով: Փորձում ենք գտնել ուսուցմանն արձագանքելու հնարներ, թե ինչպես սովորողներին ներշնչենք զգացում, որ իրենք կարող են նվաճել աշխարհը:
Հետադարձ կապը պետք է դաստիարակչական բնույթ կրի:
Հետադարձ կապը նշանակում է բացատրել սովորողներին, թե ինչն են նրանք անում ճիշտ և ինչը՝ սխալ: Այնուամենայնիվ, **հետադարձ կապի** ուշադրության կենտրոնում պետք է լինի հիմնականում այն, ինչ սովորողները ճիշտ են անում:
Սովորողի համար առավել արդյունավետ է այն ուսուցումը, երբ այն ապահովում է բացատրություն և օրինակ, թե ինչն է ճշգրիտ և ինչը ոչ ճշգրիտ իր աշխատանքում:
Մտածենք այն մասին, թե ինչպես կարելի է օգտագործել տեսական ժամանակակից մեթոդական գրականության մեջ ընդունված «հետադարձ կապի սենդվիչի» հայեցակարգը, մեր կարծիքի միջոցով սովորողին կառուցողականորեն առաջնորդելու համար՝ հաճոյախոսություն, սխալի կամ թերության ուղղում, հաճոյախոսություն:
Տարիների փորձի շնորհիվ հասկացել եմ, որ **հետադարձ կապն** աշակերտին պետք է տրամադրվի ժամանակին:
Երբ **հետադարձ կապը** տրվում է գիտելիքների ստուգումից կամ այլ ցուցադրումից անմիջապես հետո, սովորողը դրական է արձագանքում դրան և վստահորեն հիշում է այն, ինչ սովորել է:
Եթե մենք չափազանց երկար ենք սպասում **հետադարձ կապ** տալու համար, ապա պահը կարող ենք բաց թողնել և սովորողը կարող է չկապել դիտողությունները իր գործողությունների հետ: Գտնում եմ նաև, որ սովորողի առաջադիմության կառուցողական **հետադարձ կապ** ապահովելու համար հարկավոր է ուշադիր լինել նրա անհատական կարիքներին:

> Շատ կարևոր է, որ **հետադարձ կապ** տրամադրելով անհատապես հաշվի առնենք յուրաքանչյուր սովորողի խնդիրները, կարիքները և առանձնահատկությունները: Մեր դասարանները լի են տարբեր

աշակերտներով: Որոշ աշակերտների պետք է ուղղորդել ավելի բարձր մակարդակի հասնելու համար, իսկ մյուսների հետ պետք է վարվել զգույշ, որպեսզի չխոչընդոտենք ուսուցմանը և չիջեցնենք սովորողի ինքնագնահատականը:
Կարևոր է աշակերտին չվիրավորելու ցանկության և նրան պատշաճ խրախուսելու միջև ճիշտ հավասարակշռությունը պահպանել, ինչը փորձում եմ անել իմ ամենօրյա աշխատանքում:
Արդյունավետ ուսուցանելու և ուսուցման հետազոտությունները (Dinham, 2002, 2007) ցույց են տալիս, որ սովորողները ցանկանում են իմանալ, թե ինչ մակարդակի վրա են նրանք իրենց աշխատանքում:
Հետևյալ չորս հարցերի պատասխանների կանոնավոր տրամադրումը օգնում է ապահովել որակյալ **հետադարձ կապ**:
Այս չորս հարցերը օգտակար են նաև ծնողների հետ հետադարձ կապի համար:

1. Ի՞նչ կարող է անել սովորողը:

2. Ի՞նչն աշակերտը չի կարող անել:

3. Ինչպե՞ս է սովորողի աշխատանքը հարաբերվում համադասարանցիների աշխատանքի հետ:

4. Ինչպե՞ս կարող է սովորողը ավելի մեծ հաջողության հասնել:

Փորձում եմ **հետադարձ կապ** հաստատելիս հղում անել կոնկրետ գիտելիքներին կամ հմտությանը: Հենց այդ ժամանակ է, որ գնահատման ռուբրիկները կամ սանդղակները դառնում են օգտակար գործիք (օրինակ՝ մեկ չափանիշով):
Ռուբրիկը աշխատանքի վերաբերյալ սպասումների ուղերձի գործիք է և ուսուցման համար արդյունավետ **հետադարձ կապ** ապահովելու օգտակար միջոց: Արդյունավետ բաժինները աշակերտներին տրամադրում են կոնկրետ տեղեկություններ իրենց առաջադիմության մասին, համեմատած չափանիշների լայն շրջանակի հետ:
Ձևավորող գնահատում իրականացնելիս աշակերտների համար փորձում եմ առանձնացնել այն բաժինների տարրերը, որոնց հետ սովորողը ծանոթանում է, կամ օգտագործել կպչուն պիտակներով աղյուսակներ:
Հետադարձ կապն օգնում է, որ սովորողները տեղյակ լինեն ձեռքբերումներից: Հայտորոշիչ կամ մինի թեստերը, կարճ ժամանակի համար նախատեսված գրավոր աշխատանքները, որոնք տարբեր թեմաներից հաճախակի կազմակերպում եմ աշակերտների համար թույլ են տալիս

պարզել, թե որ մակարդակում են նրանք գտնվում:
Հետադարձ կապի չորս հարցերի օգտագործումը այն հնարավորինս օգտակար են դարձնում:
Հետադարձ կապի ամենաարդյունավետ միջոցներից մեկն է սովորողի հետ անհատական հանդիպումը:
Սովորողն իմ ուշադրությունից ձգվում է և հնարավորություն տալիս պարզել անհրաժեշտ հարցեր:
Սովորողների հետ անհատական հանդիպումը ընդհանուր առմամբ լավատեսական բնույթ ունի, քանի որ խրախուսում է աշակերտին անհամբերությամբ սպասել հաջորդ հանդիպմանը:
Ինչպես ուսուցման բոլոր տեսանկյունները, այս ռազմավարությունը նույնպես պահանջում է ժամանակի կառավարում: Սովորաբար զրուցում եմ աշակերտի հետ, երբ մյուս աշակերտները աշխատում են ինքնուրույն, կամ դասերից հետո, առավել անկաշկանդ մթնոլորտում:
Հետադարձ կապը կարող է լինել բանավոր խոսքով, առանց խոսքի կամ գրավոր: Համոզվել եմ, որ հիմնականում կարողանում եմ վերահսկել ոչ խոսքային ժեստերը, ազդանշանները: Դեմքի արտահայտությունը և ժեստերը նաև **հետադարձ կապի** միջոց են:
Սա նշանակում է, որ երբ բաժանում եմ սովորողների ստուգողական աշխատանքները, աշխատում եմ չխոժոռվել:
Հետադարձ կապ հաստատելիս առավել արդյունավետ է կենտրոնանալ մեկ ունակության կամ հմտության վրա: Երբ քննադատվում է միայն մեկ հմտություն, այն ազդում է սովորողի վրա շատ ավելի ուժեղ, քան մեծ տեքստը, որտեղ թվարկում են աշխատանքի բոլոր թերությունները: Օրինակ, երբ ես նախնական մակարդակով ուսուցանում էի քիմիական բանաձևեր գրելու վարպետություն, զգուշացրեցի աշակերտներին, որ այդ օրը ես կստուգեմ ինդեքսների ճշգրտությունն իրենց գրառումներում:
Երբ խոսում էի աշակերտների հետ, ես կենտրոնանում էի դրա վրա, այլ ոչ թե նրանց գրելու մյուս ասպեկտների վրա:
Հաջորդ օրը հնարավոր կլինի կենտրոնանալ ինչ-որ այլ բանի վրա:
Արդյունավետ **հետադարձ կապ** հաստատելու համար կիրառելի են նաև աշակերտների կամ դասարանների աշխատանքների հանձնման այլընտրանքային ժամկետները: Օգտագործում ենք ռազմավարություն, որպեսզի գնահատվող թեստերը կամ աշխատանքը ապահովեն արդյունավետ **հետադարձ կապ**:
Ռազմավարությունը թույլ է տալիս անհրաժեշտ ժամանակ տրամադրել որակյալ գրավոր արձագանքի համար:
Սովորողները նույնպես միմյանց կարող են տալ **հետադարձ կապ**:
Մոդելավորեք սովորողների համար, թե ինչպես են դրական արդյունավետ արձագանքները հնչում:

Սովորեցնենք նրանց միմյանց կառուցողական արձագանք տալ, որը դրական է և օգտակար:
Խրախուսենք սովորողներին օգտագործել կպչուն թղթեր, պիտակներ, լոգոներ՝ ստացված արձագանքները գրանցելու համար:
Խնդրենք այլ մեծահասակների նույնպես արտահայտել իրենց կարծիքը:
Դպրոցի տնօրենը, հաճախ կարող է կամավոր գնահատականներ տալ թեստերի համար կամ կարդալ աշակերտների շարադրությունները:
Պատկերացնում եք, թե ինչպես է աշակերտների աշխատանքի որակը աճել:
Եթե տնօրենը չափազանց զբաղված է (շատ դեպքերում դա այդպես է), հրավիրեք այլ ուսուցչի կամ դպրոցում պրակտիկա անցնող ուսանող՝ աշխատանքի քննադատական վերլուծության համար: Խնդրեք նրանց նշումներ անել:
Թեստի, աշխատանքի կամ մեծ ստուգողական աշխատանքի ժամանակ սովորողին խնդրեք գրել, իսկ դուք ասեք ձեր կարծիքը:
Սովորողը կարող է օգտագործել նոթատետրը, որպեսզի նշումներ կատարի, քանի դեռ բանավոր **հետադարձ կապ** եք տալիս:
Նոթատետրում յուրաքանչյուր սովորողի համար հատկացված բաժնում անհրաժեշտության դեպքում գրեք ամենօրյա կամ շաբաթական մեկնաբանություն: Իհարկե, դա պահանջում է ժամանակի զգալի ծախսում, բայց երբ գալիս է ժամանակը խոսելու աշակերտի, ծնողի կամ գործընկերների հետ, դուք պատրաստ եք աշխատել:
Դասի սկզբում տնային աշխատանքների և թեստերի քննարկումը թույլ է տալիս աշակերտին տալ անհրաժեշտ հարցեր և կատարել համապատասխան քննարկում: Երբեմն արձանագրված մեկնաբանությունն ավելի արդյունավետ է, քան պարզապես բարձրաձայն խոսքը:
Ինքնուրույն աշխատանքի ժամանակ փորձում եմ կպչուն թղթերի վրա մեկնաբանություններ գրել: Գրությունը կամ սմայլիկը դնում եմ սովորողի գրասեղանի վրա, որը նախատեսված է հետադարձ կապի համար:
Աշակերտներից մեկն օրինակ, դժվարանում էր շարունակել առաջադրանքը: Նա տխրում էր և ամաչում, երբ ասում էի նրա անուշադրության մասին դասարանի ներկայությամբ: Այդ պատճառով նա փակվում և հրաժարվում էր որևէ աշխատանք կատարել, քանի որ նրան ստորացրել էի:
Կպչուն սմայլիկները ցույց են տալիս, թե երբ է նա լուծել խնդիրը և ծառայում են որպես միջոց ուսուցման արդյունավետ **հետադարձ կապ** ապահովելու համար: Սովորողներն արագ հասկանում են, երբ ուսուցիչներն օգտագործում են գովասանքն ուղղակի՝ լավ տպավորություն գործելու համար:
Եթե անընդհատ ասում եմ աշակերտներին «Լավ աշխատանք է» կամ «Կեցցես», ապա ժամանակի ընթացքում բառերը կորցնում են իմաստը:
Եթե ոգևորված եմ առաջադրանքի կատարման ժամանակ աշակերտի պահվածքից, ամեն ինչ անում եմ, աջակցելով և գովաբանելով նրան:

Ձանգահարում եմ տուն, պատմում եմ մորը կամ հորը, թե որքան ուրախ եմ աշակերտի հաջողության և վարքագծի համար: Անկեղծ արձագանքի շրջանակներում մեկնաբանությունը և առաջարկությունները կրկին «նպատակային են, գործնական և հիմնված գնահատման վրա, թե ինչ սովորողը կարող է անել և ինչի կարող է հասնել» (Dinham):
Աշխատեք նկատել հանձնարարությունը կատարելիս աշակերտի վարքագիծը կամ նրա ջանքերը:
Օրինակ. **«Ես նկատեցի, որ երբ դու ճիշտ գրառեցիր տվյալները, հասկացար խնդիրը»: «Ես նկատեցի, որ դու այս շաբաթ դասերից չես ուշացել»:** Աշակերտի և նրա գործադրած ջանքերի ճանաչումը մեծ նշանակություն ունի առաջադիմության վրա դրական ազդեցություն ունենալու համար: Աշակերտներին պետք է ասել գնահատման կամ **հետադարձ կապի** նպատակը: Սա հատկապես կարևոր է ուսուցման միջին և ավագ մակարդակներում: Ժամանակ առ ժամանակ նաև խրախուսում եմ սովորողներին արտահայտել իրենց կարծիքը: Թույլ եմ տալիս նաև, որ հիմնական դպրոցն ավարտող և արդեն ավարտած սովորողներն իրենք ինձ **հետադարձ կապ** տան իմ հաջողությունների մասին որպես ուսուցիչ:

Հետազոտության ընթացք

«Մետաղներ» թեմայի ամփոփում

Դասի նպատակը՝
Սովորողը իմանամետաղների դիրքը ՊՀ – ում,բացատրի ատոմի կառուցվածքը,բնության մեջ գտնվելը:
Բացատրի ֆիզիկական և քիմիական հատկությունները,վալենտականությունը,
ՕԱ միացությունները,կիրառումը:
Գրի մետաղների ստացմանԸնդհանուր եղանակները:Կարողանա հաշվի տվյալ նմուշումմետաղների զանգվածայինբաժինները

Վերջնարդյունք՝

ա. **Կբնութագրի** - մետաղներն ըստ հետևյալ սխեմայի՝ դիրքը ՊՀ՝, ատոմի կառուցվածքը, բնության մեջ գտնվելը, ֆիզիկական և քիմիական հատկությունները, վալենտականությունը, ՕԱ, միացությունները, կիրառումը
Կներկայացնեն - մետաղների ստացման ընդհանուր եղանակները

Կգրի – մետաղների քիմիական հատկությունները պատկերող ռեակցիաների հավասարումներ

Կբնութագրի ալկալիական և հողալկալիական մետաղները, դրանց օքսիդները, հիդրօքսիդները

Կհաշվի մետաղների զանգվածային բաժինը տվյալ նմուշում Կբնութագրեն ալյումինը և երկաթը,

բ. **Կբացատրի** քիմիական կապը մետաղներում և մետաղական բյուրեղացանցի կառուցվածքը կհամեմատեն մետաղների հատկությունները ըստ ՊՀ գրված դիրքի

Կմեկնաբանի մետաղների ֆիզիկական հատկությունների և քիմիական ակտիվության կախվածությունը ՊՀ ունեցած դիրքից ու ատոմի կառուցվածքից

գ. **Կընդհանրացնի** մետաղներին բնորոշ հատկությունները,բնության մեջ գտնվելը և կենսաբանական ակտիվությունը

Կհասկանա ծանր մետաղների թունավորությունը և Երկիր մոլորակի մետաղացման համամոլորակային հիմնախնդրի կարևորությունը

Ցուցադրական նյութ՝ ՊՀ, սխեմաներ, նկարներ, քարտեզ, պաստառներ, քարտեր, երկաթե մեխ, պղնձարջասպ, մագնեզիումի փոշի, բենգալյան ձողիկներ, ջերմաչափ՝ սնդիկի համար, ծծումբ, մուրճ, անհրաժեշտ հախճապակե և այլ անոթներ, սահիկաշար ցուցադրելու համար անհրաժեշտ ՏՀՏ միջոցներ

Դասի ընթացքը՝

1. **Խթանման փուլ.** Ակտիվացնող վարժություն, կատարել մտագրոհ ,,Մետաղներ,, բառով:

   Խմբավորել բոլոր բառերը, որոնք կգրվեն գրատախտակին ,կազմելով աղյուսակ՝

   Ֆիզիկական հատկություն Քիմիական հատկություն Այլ.....

Իմաստի ընկալման փուլ

1. **Բնութագրում** են մետաղների դիրքը ՊՀ՝,

2. **Բացատրում** են մետաղների ատոմների կառուցվածքը այլումին և երկաթ տարրերի օրինակով

3. **Բացատրում** են քիմիական կապի բնույթը մետաղներում,

4. **Ներկայացնում** են մետաղների բյուրեղացանցի կառուցվածքը, այն կապելով ֆիզիկական հատկությունների հետ, բնության մեջ գտնվելու և կենսաբանական դերի հետ:

5. **Քարտեզի վրա ցուցադրում** են այն երկրները, որոնք հարուստ են մետաղների հանքատեսակներով.
օրինակ՝ մետաղներ Երկիրը, վայրը՝

Ալկալիական մետաղներ
Ռուսաստան՝ Սոլիկամսկի հանք, Գերմանիա՝ Ստասֆուրտի հանք, Ֆրանսիա՝ Էլզասի հանք

Cu ԱՄՆ՝, Չիլի,Կանադա, Ղազախստան, Անդրկովկաս, Ուրալ

Ag Կանադա, Ղազախստան, Հյուսիսային Կովկաս, Ուրալ՝, Ալթայ Au Կանադա, Ավստրալիա, Սիբիր, Ռուսաստան. Հարավային Աֆրիկա

Fe Ուրալ, Կերչ, Կուրսկ, Կրիվոյ Ռոգ, Սիբիր, Կոլա թերակղզի

Mo ԱՄՆ՝, Չիլի, Մեքսիկա, Նորվեգիա, Մարոկկո

Al Ռուսաստան, Ղազախստան Pb Ավստրալիա, ԱՄՆ՝, Գերմանիա, Մեքսիկա, Ղազախստան, Ռուսաստան

Zn Ռուսաստան,Ղազախստան,

Hg Իսպանիա, Իտալիա
Հատուկ ուշադրությամբ ներկայացվում են Հայաստանի մետաղամշակման և հանքարդյունաբերական կենտրոնները, ցուցադրելով քարտեզի վրա:

6. Ներկայացվում է պաստառ `

«**Ինչպես են գտնվում մետաղները բնության մեջ**>>

Մետաղները բնության մեջ

Ակտիվ մետաղներ Միջին ակտիվության մետաղներ Ազնիվ մետաղներ

7. **Ներկայացնում են** մետաղների ստացման եղանակները, գրվում են քիմիական ռեակցիայի հավասարումները, հավասարեցվում են օքսիդավերականգնման ռեակցիաները էլեկտրոնային հաշվեկշռի մեթոդով:

8. **Մետաղների քիմիական հատկությունները** ներկայացնելու համար կատարվում են պարզ փորձեր՝մագնեզիումի այրումը, բենգալյան ձողիկի այրումը, ծծմբի հետ սնդիկի փոխազդեցությունը, երկաթի և պղնձարջասպի լուծույթի միջև ընթացող երևույթները, միաժամանակ գրելով համապատասխան ռեակցիայի հավասարումները, նշելով ռեակցիայի տիպը: Նշվում են նաև համապատասխան մետաղների օքսիները և հիդրօքսիդները, բնութագրելով դրանք:

9. **Ներկայացնում են** երկաթ և ալյումին մետաղների բնութագրերը, նշելով նաև նրանց կիրառական մեծ նշանակության մասին:

10. **Մետաղների կենսաբանական դերը** և նշանակությունը ներկայացնում են T-աձև աղյուսակի տեսքով, լրացնելուց հետո բանավոր ներկայացնում են յուրաքանչյուր մետաղի դերը մարդու օրգանիզմում, դասը կապելով կենսաբանության, բուսաբանության, բժշկության հետ:
Կենսածին մետաղներ Ծանր մետաղներ

11. կատարում են հաշվարկ մետաղների զանգվածային բաժնի որոշման վերաբերյալ:

Կշռադատման փուլ՝

1. Ներկայացնում են սլայդ շոուն,

2. Ներկայացնում են բանաստեղծություններ,դարձվածքներ, ասույթներ մետաղների վերաբերյալ:
Դասը կապելով գրականության, պատմության, ռազմագիտության հետ:
Ակնարկ կատարելով Հայաստանի քառօրյա, 44-օրյա պատերազմներին, նշվում է մետաղների դերն ու նշանակությունը զինամթերքի, զինտեխնիկայի ստեղծման գործում:

3. **Հնչում է** «՝Բոլերոյի» երաժշտության հնչյունները

4. **Կատարվում է** գնահատում

5. **Անդրադարձ դասի** ընթացքին հարցերի միջոցով

6. **Հետադարձ կապի** հաստատում որոշ աշակերտների համար:

Իմ հիմնական թիրախները դասի ընթացքում

Դասի տիպը՝ Ամփոփիչ դաս,

Թեմայի ամփոփում 9-րդ դասարանի աշակերտների հետ:
Դասարանում սովորում են թույլ և միջին ընդունակություններ ունեցող աշակերտներ:
Դասը ուսուցանող, զարգացնող էր, այն պլանավորելիս հաշվի է առնվել աշակերտների ընդունակությունները, ընտրվել են համապատասխան ուսուցման ձևեր, մեթոդներ:
Դասի ընթացքում կիրառվել են ՏՀՏ միջոցներ, աղյուսակներ, պաստառներ, կատարվել են պարզ փորձեր:
Դասի բոլոր փուլերին հատկացված ժամանակը բաշխվել է ռացիոնալ կերպով, սահուն անցում կատարելով փուլերի միջև:
Ձննական նյութերի տեխնիկական, համակարգչային, իրազննական պիտույքների ընտրությունը կատարվել է տեղին:
Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների վերահսկողությունը կատարվել է վարպետորեն,
Խթանման փուլում կիրառվել է մտագրոհ, աղյուսակի կազմում,
Իմաստի ընկալման փուլում կիրառվել են աղյուսակներ, պաստառներ, քարտեզներ, կատարվել են հաշվարկներ,
Կշռադատման փուլում ներկայացվել է սլայդ-շոու ամբողջացնելով ողջ դասի ժամանակ ներկայացված դասի բովանդակությունը, դարձնելով այն պատկերավոր:
Իսկ երաժշտությունն ու գրական տողերը թուլացնում են ողջ դասի լարվածությունն ու ծանրությունը:
Դասը ավարտվում է հայրենասիրական, ոգեկոչ տրամադրությամբ:
Իմ ու աշակերտների փոխհարաբերությունները լավ են, հոգեբանական մթնոլորտը հիանալի:
Դասի արդյունքները գնահատում եմ լավ:
Դասի առաջադրած խնդիրները կատարվեցին լիովին:
Պարբերաբար իրականացնում եմ **հետադարձ բանավոր կապ**

դասարանում առարկայով հետաքրքրվող աշակերտների համար: Հաջորդ անգամ **դաս** պլանավորելիս ավելի քիչ բովանդակային ծավալ կընտրեմ դասն անցկացնելու համար, որպեսզի ավելի շատ լրացուցիչ հետաքրքիր նյութեր ներառեմ դասի մեջ:

Եզրակացություն

Մանկավարժական կամ մասնագիտական **ռեֆլեքսիայի** ձևավորման և զարգացման պայմանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբեմն կրթական տարածքում այդ հիմնախնդիրն անհրաժեշտ մակարդակով չի լուծվում:

Ռեֆլեքսիան տարբեր գործառույթներ է կատարում: Այն ապահովում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը, օգնում իրականացնել վերահսկողություն ուսուցչի ամենօրյա աշխատանքում, նպաստում է տվյալ կոլեկտիվում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը, կառուցողական մեթոդներով կրթական գործընթացի կազմակերպմանը: Ներկայացնելով ուսուցչի ճանաչողական, հաղորդակցական, կազմակերպչական, նախագծային կարողությունները, լուծում է ռազմավարական, տակտիկական, գործառնական խնդիրներ: Կարևոր է նրա կոնֆլիկտահարթիչ գործառույթը:

Ռեֆլեքսիան դիտարկվում է տարբեր առարկաների ուսուցման կամ մասնագիտական և անձնային, միջանձային հարաբերությունների հաստատման և կարգավորման մակարդակներում:

Անձնային հոգեբանական մակարդակում **ռեֆլեքսիան** ենթադրում է բավականին բարդ մտագործունեություն:

Առանձնացնելով **ռեֆլեքսիվ կոմպետենտության** ճանաչողական, գործառնական և անձնային բաղադրիչները, հնարավոր է դառնում ուսուցման տարբեր փուլերում ճիշտ ընտրել և կիրառել ուսուցչի խթանող ռազմավարությունները: Այդ համատեքստում ուսուցչի **ռեֆլեքսիվ կոմպետենտության** ձևավորման և զարգացման կարևոր պայման է դառնում նրա հետազոտական աշխատանքի կազմակերպումը:

Ռեֆլեքսիան որպես սեփական գործունեության գիտակցման գործընթաց հնարավորություն է ընձեռում հիշել, բացահայտել և գիտակցել իր գործունեության հիմնական բաղադրիչները՝ իմաստը, նպատակները, եղանակները, խնդիրները, լուծման ուղիները, ստացված արդյունքները:

Որպես եզրահանգում, կարծում եմ որ **հետադարձ կապը** հնարավորություն է տալիս բացահայտել հետագա անելիքները և հաստատել կապ տարբեր առարկաների միջև:

:

Գրականություն

1. Вульфов Б.З. Профессиональная рефлексия: потребность, сущность, управление // Магистр. 1995. - №1. - С. 71-79.
2. Крашенинникова Н.Б., Развитие педагогической рефлексии как условие подготовки будущего учителя к профессиональной деятельности: Н. Новгород, 2000. - 207 с. 3. Белозерцева Т.В. Педагогическая технология формирования рефлексии школьников в процессе обучения: Челябинск, 2000.- 195 с.
4. Гуреев А.П., Рефлексия профессиональной деятельности педагога как психологопедагогическая проблема: Челябинск, 2001.- 155 с.
5. Лекторский В.А. Диалектика рефлективного и нерефлективного в познании / В.А.Лекторский // Проблемы рефлексии в научном познании: / Отв. ред. В. Н. Борисов. Куйбышев: Изд-во КГУ, 1983. - С. 5 - 7.
6. Мушкина И. А. Педагогическая рефлексия как основа совершенствования профессионального мастерства учителя: М., 1999. - 152 с.
7. Романова А.Е. Профессиональная рефлексия основа повышения педагогического мастерства// Аспирант и соискатель. - 2002. - № 3. - С. 18-23.
8. Щедровицкий, Г.П. Мышление. Понимание. Рефлексия, М.-, 2005. - 596 с.
9. Эрнст Г. Г. Развитие рефлексии будущего учителя в процессе прохождения педагогической практики: Барнаул, 2004. – 240 с.